

Ե. Ք.-Միլոսոյան

ԵՂԻՇԵԻ «ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ
ԵՂԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁԸ

Նախորդ հոդվածում¹ մենք քննության առանք Վիեննայի Մխիթարյան Ն. Ակինյանի ընդարձակածավալ ուսումնասիրությունը Եղիշի մասին և ցույց տվինք, որ նրա հզորակացությունները Եղիշի անձի ու ժամանակի, ինչպես նաև սրա Պատմության՝ նյութի մասին՝ միանգամայն բռնազրոսիկ են ու անհիմն, և որ նրան ոչ մի կետում չի հաջողվել խախտել Եղիշի ավանդական տեղը մեր պատմության մեջ՝ որպես 451 թվականի «Հայոց պատերազմի» պատմիչ:

Ներկա հոդվածի նպատակն է՝ համոզող կանգ առնել նաև Ն. Ակինյանի ուսումնասիրությունից առաջ հրատարակված քննությունների վրա Եղիշի և իր զրվածքի մասին, հատկապես Եղիշի և Ղաղար Փարպեցու առնչության վերաբերյալ. և մի քանի կարևոր դիտողություններ ներկայացնել բանասերների ուղղորդությանը:

Ա. Այդ քննությունների մեջ ժամանակով առաջին տեղը զբաղում են Գր. Տեր-Պողոսյանի հոդվածները «Եղիշի Պատմության աղբյուրը» և «Նկատողություններ Եղիշի Պատմության վերաբերյալ» վերնազրկումով, որոնք լույս են տեսել Վիեննայի «Հանդես Ամսօրյայի» 1895 և 1896 թվականների համարներում (1895 թ., էջ 20—23, 58—61, 110—113; 1896 թ., էջ 129, 168, 197 և 302): Գր. Տ.-Պողոսյանը շեշտում է, որ «ծայրահեղության հասած տարբերություններ» կան Եղիշի և Ղաղար Փարպեցու մեջ, և այդ տարբերությունների ու երկու հեղինակների փոխհարաբերությունների հարցը պարզելու համար քննարկում է երեք հիմնական խնդիր. 1) երկու հեղինակների մոտ պահված նախարարական ցանկերը. 2) բյուզանդիոն ուղարկված պատգամավորության հարցը և 3) Ազվաններին ուղարկված օգնության մասին եզրած տեղեկությունները:

Առաջին հարցի վերաբերյալ մանրամասն քննության առնելով երկու հեղինակների մեջ բերած բոլոր ցանկերը՝ Գր. Տ.-Պողոսյանը գալիս է հետևյալ հզորակացություններին.— ա) չորս ընդհանուր ցանկերը և հատկական ցանկերը տարբեր հեղինակների դործեր են. բ) Եղիշի հատկական ցանկերի հեղինակը V դարի պատմության անտեղյակ անձ է և պատմական ֆակտերը հեղաշրջող պատմիչ է, որովհետև նրա հատկական ցանկերը ոչ միայն ընդհանուր ցանկերից են տարբերվում, այլև նրանք իրար մեջ անդամ ավա-

¹ Եղիշի վարդանանց Պատմությունը և նրա նորագույն քննադատը.— Տեղեկագիր ՍՍՌԿ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Զինվածության, 1943 թ. № 3, էջ 83—98.

դուքյան կարգի միտքնակութիւնը չունեն. գ) Ղազարի հատկական ցանկերի հեղինակը համեմատաբար ավելի ծանօթ է V դարին. նա ինքն իրեն հետ իր կրեք հատկական ցանկերում համաձայնակուց հետո՝ 6-րդ ցանկով համաձայն է նաև չորս ընդհանուր ցանկերին: Ճեղքից եղբակացութեանից հետևում է, — շարունակում է Գր. Տ.-Պողոսյանը, — որ մեր ձեռքը հասած Եղիշէի և Ղազարի անուններով պատմութիւնների հեղինակները իրենց ձեռքից գրավոր աղբյուրներ են սեղծել, որից դուրս են գրել 4 ընդհանուր ցանկը, իբրև մի երրորդ հեղինակի գործ: Վերջին երկու կողակացութեանից հետևում է, նախ, որ հատկական սանկերի հեղինակները 451 թվի պատերազմին ժամանակակից անձերի գործեր չեն, այլ ուշ ժամանակի պատմիչներ են նրանց հեղինակները, և երկրորդ, որ 451-ին ժամանակով ավելի մոտ է Ղազարի հատկական ցանկերի հեղինակը, քան Եղիշէին: Ընդհանուր կողակացութեանն աչն է, որ 44 ընդհանուր ցանկը սեղծ է այն հետքերից, որոնք մնացել են Եղիշէի և Ղազարի անունով մեզ հասած պատմութեանների մեջ նրանց զրավոր աղբյուրներից:

Երևանդիտն ուղարկված զեսպանութեան վերաբերյալ մատնանշելով որ Եղիշէն մեկ պատգամավորի անուն է տալիս, իսկ Ղազարը կրեք Գր. Տ.-Պողոսյանը բերում է Եղիշէից սեւ իբրև յանգիման կղևն մեծի թագաւորին» հոգնակի գրված հատվածը և համեմատելով այն 'Կազարի մեջ պահված սերթկալք յանդիման կղևն թագաւորին թէոզոսի» նման հատվածի հետ, հետևյալ կերպ ենթադրութեանն է անում. կամ կրկու պատմիչներինց մեկը մյուսին աղբյուր է ծառայել, կամ կրկու պատմիչներն էլ մի երրորդ հիշատակարանից են արտագրել այս հատվածը: Նույնպիսի եղբակացութեան զարով նաև 3-րդ հարցի, Աղվաններին օգնութեան գնալու հարցի վերաբերյալ, Գր. Տ.-Պողոսյանը պնդում է, թե Եղիշէն չի կարող Ղազարի աղբյուրը լինել, որովհետև նա հայտնապես աղավաղված է և հակասութեաններ է պարունակում, հակառակ զեպրում Ղազարն էլ պետք է նույն հակասութեաններն ունենար. ուրեմն մնում է ընթանել, որ Եղիշէն իր ձեռքին ունեցել է կամ-Ղազարի Պատմութեանը, կամ Ղազարի ձեռքին ես եղած մի ուրիշ աղբյուր, որից և արտագրելով մասամբ անփոփոխ համաձայնում է Ղազարի հետ, մասամբ էլ փոփոխելով և աղավաղելով՝ հակասութեան մեջ է ընկնում թե իրեն և թե Ղազարի հետ:

Մենք այլևս կանգ չենք առնի Գր. Տ.-Պողոսյանի հոգվածներում արծարծված այն խնդիրների վրա, թե Ղազար Փարպեցին ավելի լայն հայացք բուն քաղաքական տեսակետ ունեցող և ավելի արժանահավատ պատմիչ է, քան թե Եղիշէն, որը միակողմանի է և խնդրին կրօնական մեկնութեան է տալիս: Այս հարցում բանասերների մեջ ընդհանուր համաձայնութեան է տիրում և վիճելու առիթ չկա, թեև պետք է այն էլ ասել, որ Գր. Տ.-Պողոսյանը խիստ չափազանցանում է մոգերի զերը կղիշի մեջ իբրև սեւերգործող ումի և շագկերտին հրահանգողների, մինչդեռ Ղազարի մեջ Միհրաներսէն է կրօնական հալածանք սկսելու պատճառը: Եղիշէի մեջ էլ Միհրաներսէն է համարվում այդ քաղաքականութեանը հրահրողը (տես՝ III յիշատակի վերջը՝ սեւ ոչ միայն մեծամեծք և փոքունք, այլ և ինքն թագաւորն հրամանի բերանոյ նորա {Միհրաներսէնի} անսայր, որոյ և ձախող իրացն իսկ բունն ետրեալ էր նորա, ինչպես նաև VIII յիշատակի սկզբում՝ սեւկ մեծ հաղարպետն յոյժ էր յեթկիւղի, քանզի ինքն էր պատճառք

ամենայն չարեացն, որ զործեցանք. այլև VIII յեղանակի վերջում Մինրներսին մասին ասվում է, թե՛ «Ինքն իսկ յանձն իւր կըթեր զաւեր աշխարհին Հայոց») և մոզերը ներկայանում են միայն իբրև նրա բերանը, որոնք առիթը չեն վիսկայնում ամեն անգամ այս հարցն արծարծելու (Հմտ. VIII յեղանակի սկզբը, որտեղ Մինրներսինի համար ասվում է՝ «Ակառ բանս ի բերան զնի մոզիտին և մոզացն, որք մատուցեալ յանդիման ասէին ցթագաւորն»):

Հակասութեաններն ու տարբերութեանները, ինչպես և նմանութեանները, եղիշիի և Ղազար Փարպեցու մեջ ճիշտ են մատնանշված Գր. Տ.-Պոգոսյանի և մյուս բանասերների կողմից: Սակայն խնդիրն այն է, թե ինչպես պետք է բացատրել զրանք և արդյոք զրանք ապացուց են մտնում ունեցած կախման մյուսից: Ամենակարևորն այստեղ ընդհանուր և հատկական ցանկերի խնդիրն է: Ահլ թվում է, որ ճիշտ գիտելով իրողութեանը՝ Գր. Տ.-Պոգոսյանը սխալ բացատրություն է տվել նրան, Փարպեցուն ավելի մոտ համարելով 451 թվի անցքերին, քան եղիշիին: Փարպեցու ցանկերի ավելի կանոնավոր, իրար հետ համաձայնեցված լինելու պատճառն այն է, որ նա զբի է տասնյակ տարիներ անցնելուց հետո, համեմատաբար ավելի խաղաղ ժամանակ, հնարավորություն է ունեցել օգտվելու աղբյուրներից, ձևերին եղել են հիրավի այդպիսի ցանկեր, որոնք նա համեմատել է իրար հետ և ճշտել, հակասութեանները վերացրել, ինչպես որ նրա պարտականութեանն էր իբրև պատմիչի: Իսկ եղիշիի Պատմության բնույթը բոլորովին այլ է և այդ երկու հեղինակներին երբեք չի կարելի միևնույն չափանիշով մոտենալ: Մինչդեռ Ղազար Փարպեցու գործն իսկական պատմություն է, եղիշիի երկը բանաստեղծություն է պատմական, նյութի վրա, վկայաբանական գույնավորում ստացած մի դրուցագնորդություն, խիստ որոշ նպատակով գրված — «Որպեսզի շարունակ կարդաս, լսելով առաքինի անձերի քաջությունը և հետ կացածների վատթարությունը», որպեսզի այն լինի «սիրելիների համար մխիթարություն, հուսացողների համար հույս և քաջերի համար քաջաբերություն» նեղ օրերում: Այդ պատճառով էլ եղիշիի համար նշանակություն չեն ունեցել ցանկերի դասավորության կարգն ու ճշտությունը. նրա նպատակի համար բավական էր շեշտել միայն, թե ովքեր են եղել, օրինակ, սուրբ Ռախման հավատարիմները և ովքեր ուրացողներն ու նրանց կողմնակիցները, և որտեղ նա իր ձեռքին պատրաստի ցանկ չի ունեցել: Ինքն է շարադրել այդ ցանկը՝ առանց զաների դասավորության և հակասությունների վրա ուշադրությունը սեռելու: Մանավանդ որ այդ ցանկերից մեկը կամ մյուսը, ինչպես նաև եզակի ու հոգնակի արտահայտությունները, կարող են ազատված կամ հետո մտած լինել եղիշիի սկզբնաղբյուր բնագրի մեջ: Չէ՞ որ Գր. Տ.-Պոգոսյանն ինքն էլ գնում է եղիշիի ակնհայտ պատմագիր լինելու հարցը և այդ ակնհայտություն հանգամանքը չի մտածանում մխտելու, ինչպես արել են ուրիշ բանասերներ (օրինակ՝ Կյուլեսերյան): Խոսելով այն մասին, թե ինչպես պետք է բացատրել եղիշիի մի քանի անգամ իրեն ահանատես լինելը շեշտելը, Գր. Տ.-Պոգոսյանը գրում է. «Մենք ոչ մի հիմք չունենք ասելու, թե այդ խոսքերը, որոնք ակնհայտես հեղինակի ժամանակին են վերաբերում, կեղծ են. ընդհակառակը, մեզ հայտնի է, որ պատերազմից հետո Պարսկաստանի խորքերում և 442 թվին Բուշանաց արշավանքի ժամանակ կազմված բանակի մեջ կային քահանաներ, որոնցից մեկի մասին

հիշվում է, որ «Համառոտություն» է գրել. դա Արբանյակ Խոստովանողն է. մեզ հայտնի է նույնպես, որ ոմն Սուրեն Սյունյաց եպիսկոպոս գրել է V դարի պատմական զեպրերի մասին «Ճաներ» հայտնի են նաև V դարի մասին մեզ հասած զանազան հիշատակարաններ: Թե արդյոք հետին դարերի գրողներից մեկը, եղիշեի անվան տակ ծածկված, այս հիշատակարաններից է օգտվել և ուղղակի զուրս գրել նրանց հեղինակի ականատես լինելու մասին տեղեկությունները,—այդ որոշելու համար միջոցները պակասում են... Այսպես, ուրեմն, երբևէ հակառակ չէ և ընդհակառակն պատմական տեղեկություններին համապատասխանում են ականատես լինելու մասին վկայությունները: Եվ արանից հետո Գր. Տ.-Պողոսյանը հետևյալ ենթադրություն է անում. «Մենք կարծում ենք, որ եղիշեի անունով Պատմությունը, ինչ վիճակի մեջ որ նա մեզ հասել է, հիմնված է եղիշեի իսկական հիշատակարանի վրա, քի հետին դարերում փոփոխության ենթարկվելով՝ այլալուր է և մի նոր գրություն, մեզ հասած Պատմության, հիմք է ձառայել»¹: «Այս ենթադրության հիմքն է հենց այն, որ մեզ հասած Պատմությունը վերագրված է պատերազմին մասնակից եղիշեին և նրա անունով է մեզ հասել: ...«Առանց եղիշեի մի որևէ պատմական գրավոր վաստակի գոյությունը՝ զժամար թե բոլորովին նոր գրություն վերագրվեր նրան» և այլն:

Եթե Գր. Տ.-Պողոսյանն ընդունում է, այսպիսով, եղիշեի սկզբնաղբի հիշատակարանի գոյությունը, էլ ի՞նչ հարկ կա ենթադրելու, որ հետին դարերի գրողներից մեկն է զուրս գրել հեղինակի ականատես լինելու մասին եղած տեղեկությունները, քանի որ դրանք հենց եղիշեի իրեն սկզբնաղբի հիշատակարանինը կարող են լինել: Սրանով իր բացատրությունն է գտնում նաև ազավաղուճների և հակասությունների հարցը, որոնք կարող են սկզբնաղբի եղիշեի մեջ մտցված լինել հետագա խմբաղիբների կողմից, ուրիշ և նրանց հիման վրա խնդիրն այնպես պատկերացնել, թե եղիշեն իր ձեռքին ունեցել է Ղազարի Պատմությունը, երբևէ չի կարելի: Այնուհետև, հիմնավոր չէ նաև Գր. Տ.-Պողոսյանի այն պնդումը, թե «եղիշեն չի կարող Ղազարի աղբյուրը լինել, որովհետև նա հայտնապես ազավաղված է և հակասություններ է պարունակում, հակառակ զեպրում պետք է Ղազարն էլ նույն հակասություններն ունենար»:

Մի՞թե Ղազարը չէր կարող նկատելով եղիշեի մեջ եղած հակասություններն ու ազավաղուճները և ուրիշ աղբյուրներ էլ ունենալով իր ձեռքում՝ ուղղել դրանք: Եղիշեի ականատես պատմադիր լինելու հարցը, ինչպես երևում է, շատ է զբաղեցրել Գր. Տ.-Պողոսյանին. նա մի անգամ էլ է անդրադառնում դրան 1906 թվին (տես՝ «Հանդես Ամսօրյա», 1906, էջ 219—221 («Եղիշեի քննական ուսումնասիրություն» մի հատվածի առթիվ)) և զբոս է հետևյալը. «Առաջին անգամ մեր հոգվածում հարց հարուցանելով եղիշեի մեջ հանդիպող ականատեսի խոսքերի մասին, այն ժամանակ ենթադրել ենք, որ այդ խոսքերն աղբյուր հիշատակարաններից են: Ինչպես և անպատճառ կեղծիք կարող են չլինել: Նույնն այժմ էլ կրկնում ենք նորագույն հիմքերով և պնդում ենք, որ նրա ոչ միայն կեղծիք չեն, այլ ականատեսի խոսքեր են: Այդպիսի հիշատակարաններ կային մինչև Թոման, այն է՝ Խոստովանողի «Համառոտություն», եղիշեի Նախատիպը, Մուսես Սյունյաց եպիսկոպոսի

¹ Ընդգծումը իմն է: Տ.-Մին.

ձևերը և այլն: Արդարև դյուրին չէ միանգամայն ապացուցանել այդ հնթարութեան իրավացի լինելը, այն հիշատակարանների կորստյան պատճառով, բայց զժամանակս հերքումն չէ միշտ. ընդհակառակը. անարժեք է ականատեսի խոսքերն էլ կեղծիք ընդունել հենց նրա համար, որ դյուրութեամբ ապացուցված է ներքին հետին խմբագրություն լինելը, նամանականդ որ գիտենք հաստատ, Արախանս իրև ականատես զրել է Վարդանանց զործերը: Պետք է չմոռանալ, որ բուն թնոյրյան նպատակն է և պետք է լինի որոշել այն քանակագին հատվածները, որոնք հետին խմբագրության մեջ մնում են նախատիպ աղբյուր եիշատակարաններին:

Մեզ թվում է, որ Պր. Տ.Պողոսյանն այստեղ արդեն միանգամայն ճիշտ հոգի վրա է կանգնել: Ինչպես մեր գրականության բոլոր հնագույն երկերը. այնպես էլ ներքին նախատիպը կամ Սկզբնաղբյուր հետագայում անուշտ խմբագրության է ենթարկվել և բանասիրական լուրջ քննադատության նպատակը պետք է լինի— մի փոքր ձևափոխում ենք Պր. Տ.Պողոսյանի վերջին, մեր կողմից ընդգծված նախադասությունը— որոշել այն փոփոխություններն ու հավելումները, որ հետագա խմբագրությունը կամ խմբագրությունները մտցրել են սկզբնական կամ նախատիպ ընագրի մեջ: Իացի այդ, այստեղ պետք է ավելացնել նաև այն, որ քանի որ ներքին, զոնե իր Սկզբնագրում, իրեն ականատես հեղինակ է հայտարարում, այդ ականատեսությունը հիմնավոր փաստերով ժխտելու պարտականությունն այն բանասիրների վրա է ընկնում, որոնք այն չեն ընդունում (ինչպես կյուլիսերյանը և ուրիշները): Իսկ մինչև այժմ զեռ ոչ մի բանասիր չի կարողացել փոքր ի շատե լուրջ, ծանրակշիռ փաստերով հերքել ներքին ականատես պատմագիր լինելու հանգամանքը:

Պր. Տ.Պողոսյանի առաջին հոդվածաշարքը դեռ չէր վերջացել, երբ այդ հոդվածների ազդեցությունը հանդես եկավ Պր. Խալաթյանը (Շահնդես Ամսօրյա, 1895, էջ 113—116), որն անմիջապես հետ վերցրեց իր արտահայտած նախկին այն կարծիքը, թե մեր այժմյան ներքին աղբյուր է ծառայել Վազար Փարպեցու համար (տես՝ Պր. Պալաթյան, Շահնդես Փարպեցի և զործք նորին, էջ 117—120): Այժմ նա այն կարծիքն է հայտնում, թե ներքին ընդգրկելու առաջ շատ տարբեր էր այն օրինակից, որ այսօր մեր առաջ են դնում տպագրությունները: Վերջինիս մեջ նկատվում են հետսասուտ ընդարձակ ընդմիջարկություններ (Interpolation): Պալաթյանի կարծիքով էլ ներքին ունեցել է նախնական ընագիր, որից դուրս օգտվել է Փարպեցին և որը ծանոթ էր նաև Սերեոսին: Այդ նախնական ընագիրը հետո ենթարկվել է փոփոխությունների և նորից մշակվել ըստ երևույթին ոչ վաղ քան VII դարը:

Բ. Պր. Տ.Պողոսյանից անկախ՝ 1894—1896 թվականներին զրել և նախ Շահնդես Ամսօրյայի» 1905—1907 թվականների համարներում և ապա առանձին զբքով տպագրել է իր ուսումնասիրությունը Բարբեն Սյուլիսերյանը (Շահնդես, քննական ուսումնասիրություն): Ազգային Մատենադարան ՄԷ, Վիեննա 1909, էջ ԻԷ—461): Սա մի ընդարձակ աշխատություն է, որի մեջ մանրամասնարար խոսվում է ներքին ձեռագրերի, հրատարակությունների, օտար լեզուներով թարգմանությունների և ուսումնասիրությունների, հա-

1 Ընդգծումներն իմ են. Տ.-Մ.Ի.

յերեն աշխարհարար թարգմանությունների և ուսումնասիրությունների, Եղիշեի կենսագրության, «Պատմություն» բովանդակության, գրության ժամանակի, աղբյուրների (Արրահամ Խոստովանող, Փիլոնի հայերեն թարգմանությունը և այլն), Ղազար Փարպեցու հետ ունեցած առնչության, լեզվի մասին: Այս բոլորը զետեղված է գրքի տասջին մասում: Երկրորդ մասը Սյունյաց, Մամիկոնյանց նախարարությունների, Վասակի և Վարդանի, Վարդանանց պատերազմի մասին է, իսկ երրորդ մասը՝ Սասանյանների, մուսուլման կրոնի, սրա ու քրիստոնեության նարարեթության, չորրորդ գլխի Հայաստանի քրիստոնեության մասին: Այս երրորդ մասից հաղաված 5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխները Կյուլեսերյանը հետո հրատարակել է առանձին զբոսայգով («Հայաստանյայց եկեղեցին հինգերորդ դարու մեջ», Կ. Պոլիս, 1912, ԺԵ+97): Այս գրքույկում առանձնապես կարևոր է Եղիշեի «Վարդանանց պատմություն» վրա եղած այլևայլ ուսումնասիրությունների ցանկը (էջ ԺԱ-ԺԵ):

Կյուլեսերյանի ընդարձակ ուսումնասիրության նպատակն է ապացուցել, որ Եղիշեն օգտվել է Ղազար Փարպեցուց և նա, ուրեմն, ժամանակակից և ակնհայտ պատմագիր չէ: Երբ նա իրեն ժամանակակից և ակնհայտ պատմագիր լինելը շատ անդամներ շեղում է, այդ իբր միայն ընթերցողներին մոլորեցնելու և իր անձը թաքցնելու համար հորինված կեղծիք է: Սակայն այս կասկածը Եղիշեի ակնհայտ պատմագիր լինելու մասին Կյուլեսերյանը ոչնչով չի հիմնավորում, չի բացատրում, օրինակ, թե ինչ պատճառով և ինչպիսի նկատառումներից զրգված է Եղիշեն կեղծիք կատարում և իր անձը թաքցնում, այլ ասում է լոկ հետևյալը. «Ամենն շուրջ բայց իրական կասկածի մը շարժառիթն՝ նույն ինքն պատմագրին ակնհայտ ստի շեղանքն են: Ի՞նչ հարկ կա՝ գրեթե ամեն յեղանակի մեջ՝ թե ուղղակի և թե անուղղակի կերպով մը շեղանքի թե ինքն ակնհայտ և իր պատմագրած դեպքերուն: Կարծես զիմացը կասկածող մը կա, զոր աներկմիտ ընելու ամեն ճիշդ կթափե: Փոխանակ այնչափ կրկնություններու՝ եթե պատմագիրն անգամ մը յուր անունը զրոշմեր իր գործին որևիցե մի անկյունը, բավական էր ամեն կասկած և ամեն ենթադրություն հերքելու: Ակնհայտություն խնդիրն այս ձևով լուծելն, իհարկե, լուրջ քան չէ և այսպիսի փաստարկումները համոզիչ համարել չի կարելի: Միթե թույլատրելի է ակնհայտ օրենքի զրգի անձը կասկածի ենթարկել միմիայն նրա համար, որ նա մի քանի անգամ զանազան առիթներով կրկնում է իր ակնհայտությունը հանգամանքը: Ի՞նչ վստահություն, թե եթե Եղիշեն իր անունը զրոշմած լինելու իր գրքի սորևիցե մի անկյունը, հենց այդ հանգամանքը մի այլ քանսեր թանկերքելիս ապացույց չպիտի համարել նրա կատարած կեղծիքի: չէ՞ որ մենք այդպիսի մատենագիրներ էլ ունենք, որոնց անունը թեև զրոշմված է նրանց զրգածքների ճակատին, բայց նրանք, այնուամենայնիվ, նույնպիսի կասկածների առարկա են դարձել: Վերջապես, կրկնություններ, երբեմն բոլորովին ավելորդ կրկնություններ, կարելի է մատնանշել շատ զրոշների զրգածքներում, նույնիսկ Եղիշեի քննադատների զրգածքներում, Բայց այդտեղից եզրակացություն անել հեղինակի անձի կամ ասածների վավերականության մասին, մեր կարծիքով, միանգամայն անտրամաբանական է ու անթույլատրելի:

Այնուհետև Կյուլեսերյանը ցույց է տալիս, որ Եղիշեն օգտվել է Մա-

բուժաս Մայփերկաթցու (= Եփրկերտ, Մարտիրոսոյիս կամ Մարտիրոսաց քաղաք) Արևելյան վկաների Պատմության այն հայերեն թարգմանությունը, որ կատարել է Արրանամ Սոստովանողը և ավելացնում է, որ այդ պետք է տեղի ունեցած լինի թարգմանչին աքսորի վերադառնալուն հետո: Այստեղ գործը կիյնա 464-ին սկիզբը (էջ 151): Կյուլեսերյանն ընդունում է, որ այդ զրվածքը Վերջանամ Ասորեստանի մեջ կթաղմանն ասորերենն: ուրեմն թարգմանությունը պետք է եղած լինի 464-ից առաջ, ավելի որոշ 452-ի և 464-ի միջև, հավանորեն, նկատի ունենալով զրա համար պահանջվող ավելի երիտասարդական հասակը և աշխույժը, շուրջ 455-456-ին: Այնուհետև, մինչ ոչ մի հիմք չենք տեսնում: Կյուլեսերյանի նման ենթադրելու, որ Արրանամի թարգմանությունը Հայաստան հասած և, օրինակ, Եղիշեի ձեռքն ընկած պետք է լինի անպատճառ թարգմանչի աքսորից վերադառնալուց հետո, այն է՝ 464 թվականի սկզբին: Գիրքն անշուշտ թարգմանված էր նույնպիսի հավանաբանի ու նեղության մեջ գտնվող հայերին հոգևոր մխիթարություն մատակարարելու համար և ամենայն հավանականությամբ թարգմանությունից անմիջապես հետո հասցվել է Հայաստան և լայնորեն ծանոթացվել հայ զրական շրջաններին: Այնպես որ Եղիշեի նրանից օղտված լինելը չվկայարանական ասացվածներու և ձեռքու փոխառություններու մեջ ոչ մի կերպով չի կարող փաստ ծառայել Եղիշեի Պատմությունը V դարի վերջերք կամ VI դարի սկիզբները տանելու համար:

Ապա կյուլեսերյանն արժարժում է Փիլոնի երկերի հայերեն թարգմանության հետ Եղիշեի ունեյած առնչության հարցը: Փիլոնի հայերեն թարգմանությունը կատարված համարելով V դարի վերջերին—VI դարի սկզբներին, կյուլեսերյանը մի քանի օրինակներ է բերում՝ ապացուցելու համար, թե Եղիշեն օգտվել է այդ թարգմանությունից և, ուրեմն, իր գիրքը գրել է V դարի վերջին կամ, ավելի ճիշտ, VI դարի սկզբին: Սակայն բերված օրինակներն ամենևին չեն ապացուցում, թե Եղիշեն օգտվել է Փիլոնի հայերեն թարգմանությունից, որովհետև այդ օրինակները ոչ մի տեղ բառացի նմանություն չունեն: Իսկ եթե հարցն այն է, թե Եղիշեն մտքեր ու ոճեր է աստորեն փոխ առել Փիլոնից, ապա այդ կարող էր անել նա հենց բնագրերին ծանոթ լինելով և ինքն անձամբ հայացնելով Փիլոնի գեղ հայերեն չթարգմանված մտքերը՝ առանց որոնել հայերեն թարգմանություն ունենալու իր ձեռքին:

Օրինակ, ի՞նչ կարող են ապացուցել այսպիսի նմանությունները, որոնք կյուլեսերյանը մեջ է բերել իբրև ապացուցական նմանություններ:

Փիլոն	Եղիշե
«Զուգութիւն արգարութիւն ձեռա... Անդոյն ազբիւր է շարեաց»:	«Զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ձեռոյ շարեաց»:
«Ինքն իւր է անզի և ինքն ինքեամբ լի և բուռական, աստուածս և այլն»:	«Մշ սկիզբն առեալ յումքէ լինել աստուած, այլ ինքն ինքեամբ մանջնասոր, ոչ ի անզի ուրեք, այլ ինքն ինքեան անզի»:
«Քանզի և կանայք ըստ ումորութեան յսն ընդ աստ և նախան ձին զնոյն սախանն, և զնոյն կամս յինքեան բերեն»:	«Ամենեքեան իայ կանայք՝ միաւսուս զերկուսոր նախան ձին բերելով, սչինչ ընդհաս և բեւեցան յայն- ցանէ, որ ոչ ճաշակեցին զաշ- խարհ»:

«Են սպաս պաշտաման կրեն ոչ ի ծառայից և յաղանայց»:

«Ձի թէպէտ ունէին զիրաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երեւի ե նոցանէ՛ թէ որ աիկինն իցէ կամ որ նա՝ ժիշանս ...»: Ոչ որ ումեք ջուր ի ձեռս արկանէր և ոչ կրտսերք աւազաց զաստառակս մատուցանէին»:

Այսպիսի օրինակներն ավելի շուտ ապացուցում են, որ Եղիշեն ինքն է ազատորեն թարգմանում ու բնորոշում Փիլոնից վերցրած մտքերը, քան թե՛ որ նրա առաջ VI դարի սկզբին կատարված հայերեն թարգմանությունն է եղել:

Անցնենք Ղազար Փարպեցու և Եղիշի առնչություն հարցին ըստ Կյուլբեքյանի: Նրա համար պարզ է, որ սամն պարադայի մեջ Վարդանանց անանուն պատմագիրը չի կրնար ժամանակագրորեն Վարդանանց նախադասվի: Ամենն պարզ բայց հաստատուն ապացույց կհամարիմ նույն ինքն Փարպեցին: Այս պատմագիրը Վարդանանց և Վահանյանց մանրամասն պատմությունը գրելով (այսինքն՝ և՛ զարու Մամիկոնյանց) երբեք ակնարկում է մի չընկեր թե յուր գրածներն Վարդանանց նկատմամբ՝ ուրիշ մարդն գրած բլա նախապես... Եղիշե կամ ուրիշ մը՝ և թե զոչոք յուր ունեցած ըլլար Փարպեցին առաջ՝ իբր պատմագիր Մամիկոնյանց, Փարպեցին անպատկառ դայն պիտի ունենար յուր ձեռին և պիտի հիշեր, ինչպես որ հիշած է Աղաթանգեղան ու Բուզանդը: ...Քրտավ է, որ Փարպեցին չէր կրնար Վարդանանց պատմությունն իր ձեռքն ունենալ, բայց սա կրնար իր ձեռքն ունենալ Փարպեցու պատմությունը... Անտարանայի է, որ շատ բնորոշակ նմանություններ կան երկու պատմություններում մեջ. նմանապես կան կարևոր տարբերություններ, որոնք մատենագրական այսպիսի խնդիրներում մեջ քննադատը կմիտեցնեն երրորդ աղբյուրի մը հավանականությամբ լուծելու կնճիտը (էջ 177—179): Սակայն Կուլբեքյանը երրորդ աղբյուրն անհավանական է համարում և գտնում է, որ կարելի է առանց երրորդ աղբյուր նեթադրելու էլ եզրակացություն հանել:

Այնուհետև Կյուլբեքյանը, այդպիսի եզրակացություն հանդիլու համար, մատնանշում է նմանության բազմաթիվ էջեր Փարպեցու և Եղիշի մեջ, որոնք, սակայն, ոչինչ չեն ապացուցում, որովհետև նրանց երկուսի ոչ միայն երրորդ աղբյուրն ունենալու, այլև անկախության զեպտում էլ ուրիշ կերպ լինել չէր կարող. քանի որ նրանք գրված են միևնույն նյութի մասին և ժամանակով էլ իրարից շատ հեռու չեն: Այստեղ հարկ ենք համարում նաև շեշտել, որ զանազան մանր-մունր տարբերությունները նույնպես ոչինչ ապացուցել չեն կարող, որովհետև մենք թե առօրյա կյանքից և թե պատմությունից շատ զեպտեր գիտենք, երբ նույնիսկ զեպտին ականատես մարդիկ միևնույն իրողությունը տարբեր ձևով են նկարագրում՝ մոտենալով տարբեր կողմերից և ուշադրություն դարձնելով երևույթի տարբեր կողմերի վրա:

Բայց մենք մի կողմ ենք թողնում Կյուլբեքյանի սանպատճառ դայն պիտի ունենար յուր ձեռին՝ կամ սա կրնար իր ձեռքն ունենալ Փարպեցու Պատմությունը թեկան ենթադրությունները, որոնց հավանականությունը ամենևին ոչնչով չի գերազանցում նրանց անհավանականությունից, և անցնում ենք նրա բերած նմանությունների հարցին: Կյուլբեքյանն ասում է:

որ երկու պատմագիրներին նմանութիւնները միօրինակ չեն. Նգիշին փոփոխում է Ղազարի մոտ եղածը: «Այն հատվածները, որոնք ընդարձակ են Փարպեցու քով, զանոնք կսկսեմ Վարդանանց պատմագիրը և փոխադարձաբար...»: Հետևում է 12 օրինակ, որոնք սակայն ընամ պայացուցական դրութիւն չունեն: Մեր ասածը ակնհայտնի կացուցանելու համար զննեք այստեղ գրանցից մի քանիսը.

Փարպեցի

Նգիշու

«Աստուածք զոգուցն զիւսս ջերմագոյնս ևս զրեն և կամին տեսանել... (էջ 117)... ևս առաւել պարտիմք և ընդ զիւս ամենեցուն հոգուց հոգայ և գտանել. և եթէ յանկարծ ծուլացեալ գաանիմք յայսպիսի մեծ հոգոյութենէ, տեղեկացեալք յօրինաց մերոց թէ ծանր պատուհաս կրելոց եմք յաստուածոցն» (էջ 122).

«Մանաւանդ զի և առաջի աստուածայ վասն ձեր համարս ունիմք ասլո».

Այս պարզ նախադասութիւնն ասելու համար կարիք կար, որ Նգիշին Փարպեցու գիրքն ունենար աչքի առաջ և նրա երկու իրարից բաժանական հետու ընկած էջերից քաղեր այդ միտքը մարդկանց աստծու առաջ պատասխանատու լինելու մասին: Կարծում ենք՝ ո՛ր Մանաւանդ որ աստվածաշնչին քաջ ծանոթ Նգիշի մտքում այդ առթիւ կարող էին ուրվանշել Մատթ. ժԲ 36, Հոովմ. ժԴ 12 և Երր. ժԴ 17, որտեղ թեև այլ կապակցութեամբ ու իմաստով, բայց խոսքը դարձյալ աստծու առաջ «համար» տալու մասին է: Պետք է նկատի ունենալ նաև, որ Նգիշին աստծու առաջ «համար» տալու մասին խոսում է նաև VIII յեղանակում. «այլ է որ համարս խնդրէ ի մէնջ և վասն արտաքնոց և վասն ներքնոց» կամ «Տալոց հատուցանելոց ևս վրէժ թագաւորաւն քով յանկաշառ ատենին աստուծոյ» (Նգիշ, Թիֆլիս 1913, էջ 221 և 226).

էջ 210—211. «Եւ արին Վարդան աւրն Մամիկոնէից բաժանեալ զիւր գունդն յերես առաջս»:

«Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ և զաւագանին հարցանէր և միարան ամենեցուն խրատու զգորագլուխսն կարգէր այսպէս»:

էջ 216. «Իսկ ի զօրացն Պարսից որք առկան ի պատերազմին յաւուրն յայնմիկ, զոր ստուգիւ համարեալ պատմեցին մեզ տեղեկացեալք ի զօրագլխացն Պարսից. երեք հազար հինգհարիւր քառասուն և չորս այր»:

«Պէ ի կողմանէ ուրացելոցն անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգհարիւր քառասունևչորս այր»:

էջ 304. «Տէ՛ր Յիսուս, ընկալ զոգիս մեր»:

«Տէ՛ր Յիսուս, ընկալ զոգիս մեր ամենեցուն և խառնեա զմեզ ի գունդս սրբոց քոց»:

Այսքանը բաժանական ենք համարում: Մենք ընտրեցինք, տեղը խնայելու համար, ամենակարճ հատվածները, բայց մյուսներն էլ նույն ընտելի են: Կարելի է միայն դարձանալ, որ այսպիսի ոչինչ չասող նմանութիւններով ուղղում են պայացուցված համարել Նգիշի կախումը Ղազարից, մինչդեռ հենց այդ օրինակների հիման վրա կարելի է նույնպիսի, եթե ոչ ավելի

մեծ, իրավունքով պնդել, թե Ղազար Փարպեցին է արտագրել Եղիշեից՝ Պարզ չէ՝ միթե, որ պարսիկների կողմից ընկածների թվի առթիվ ասված զոր ստուգիչ համարնալը-ը հետո ավելացրած բացատրություն է մի հեղինակի կողմից, որ իր առջև ունեցել է միայն թիվը Ապշեցուցիչ է մանավանդ «Տէ՛ր Յիսուս, ընկալ զոգիս մեր»-ը մեջ բերելը, որը շիսուսի մահվան ժամին արտասանած «Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ» բառերի ձևափոխությունն է (Ղուկ. ԻԳ. 46), որը ասել է նաև Սանտիանոս Կաթողիկոս իր մահվան ժամին— «Տէ՛ր Յիսուս, ընկալ զոգի իմ» (Գործք Առաք., է 58), ասել է Սահակ Պարթևն իր մահվան ընթացքին (տես՝ Կորյուն, հրատ. Մ. Արեղյանի, էջ 88), և որը կարելի է գտնել նաև վկայարանական գրվածքներում իբրև նահատակվածների վերջին խոսքը (տես՝ Վկայք Արևելից, էջմիածին 1921, էջ 164, Երանելի Զեղանդուխտի խոսքերը «Ինչ, տէ՛ր, ընկալ զհոգի իմ»):

Բայց սրանով չբավարարվելով՝ կյուրևսերյանը բերում է փոփոխորեն ընդօրինակված նմանություններու ուրիշ խումբ մ'ալ, ավելի հետաքրքրականս: Մենք հնարավորություն չունենք այդ ընդհանուր մեջ բերելու, բայց նրանցից մի երկուսի վրա այնուամենայնիվ անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել:

Փարպեցի

Սղիոն

1. «Արդ՝ բանի աշխարհք են, որում զուր իշխէր աստուածաբար... և այլն»:

«Աշխարհն Հայոց, Վրաց և Աղուանից, և Լիֆնաց, Մալգից և Կորդուաց, Աղձնեաց» և այլն:

2. «Այսքիկ ամենքեան եպիսկոպոսս, և ի պատուական երիցանց սուրբն Ղեոնդ, և Խորէն ի Միենոյ, և Դաւիթ, և այլ պատուական երիցունք և այլ վանականք բազումք... այսքիկ ամենքեան աւագ ասնուանաբք, հանդերձ աւագ սեպհօք և բարեպաշա եպիսկոպոսք և աւագ բանանայիւք և վանականք, պատասխանի հրովարտակին գրէին»:

«Այս ամենայն եպիսկոպոսք և բորեպիսկոպոսք և պատուական երիցունք ի տեղեաց տեղեաց հանդերձ սուրբ ուխտիւ եկեղեցւոյ՝ միարանք և միահաւանք, միահամուռ ժողովաւք ի թագաւորանիստ քաղաքին յԱրտաշատ, հաւանութեամբ մեծամեծ նախարարաց և ամենայն բազմութեամբ աշխարհին արարին նամակին պատասխանի»:

3. «Մի ոմն յսասանիկ ասնէն, որում անուն էր Զանգագան, ... լսէր յոմանց զխորհեայսն Հայոց և երթեալ վաղվազակի պամէր նմանոյն իւրում Վասաֆայ: Որոյ բանից իրազգած եղեալ նենգաւոր քսուին՝ աւագ նախարարքն Հայոց կալեալ զնա ի զեօղն որ կոչի Արծակ, ասրեալ կապեցին ի միսում ես ի զեօղ յանուանեալ Բերդկունս, ի նմին Բագրեանդ զաւտի, զոր և յեա բազում աւուրց՝ ըսա արժանի գործոց իւրոց անօրէնութեանց՝ բարկոծեալ սասակեցին»:

«Բսկ մի ոմն ի նախարարացն որ անգր զի պեցաւ, էր ի նոցա խորհրդի, և ոչ միարանեաց ընդ նոսա ի մեծ վայրութիւնն. և անդէն աստամայն ի նոցունց ի տեղւոցն քարկոծեցաւ, և ան մեծ անկաւ ի վերայ ամենեցունց»:

4. «Եւ այսպէս յօրինեալ գնական, և յաստուծոյ խնամսն ապաւինեալք յարձակեցան ի վերայ թշնամեացն: Յորս նախագոյն յառաջեալ ի տեղի մարտին Կամ-

«Եւ զայս ասելով՝ խումբ արարեալ յարձակէին. և զաջ թեն բեկեալ՝ գձախոյ կողմամբն արկեալ, և սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս զաշտին, և վա-

1 Ընդգծուածներն իմն են: Տ.-Մին:

սարականն Արշաիր և Մուշ սեպուհն Դի-
մաքսենից, որք յանգիտութենէ տեղեացն
ղիպեցան թանձրախոր սաստիկ մօրից...
(պատմում է տղմի մեջ ընկզմվելը, Մուշ
Դիմաքսյանի սպանվելը, Արշավրի՝ Լիմաց
Սագավորի եղբորը՝ Վուրկիին սպանելը և
հետո նորից ձի նստելը) ...և զարհուրեցու-
ցեալ զթե իւրոյ կողման թշնամեացն՝ փա-
խրսաական առնէր»:

5. «Թէ արդ սաեաց անօրէնն Վասակ
ուխաին աստուծոյ... և զրեբղեանն
ամրոցացն Հայոց իրաց կա-
լաւ... (պատմում է Մամիկոնյան և կամ-
սարական ու այլ տոհմերի երեխաներին
հավաքելն ու Սյունյաց բերդերը տանելը
և ապա Պարսից թագավորի մոտ ուղար-
կելու մատուցման մասին):

խըսաական առնէին մինչև յամուր տեղին
մայրեացն առ խորագոյն դարիւքն Լուինաս
գեաոյ... (ապա պատմում է նախարարնե-
րից մեկին ձիուց վայր զցելը, Մուշի
սպանվելն ու Պարսիկի վիրավորվելը,
Վուրկի սպանութունը)... և զրազում համ-
հարգս նորին ընդ նմին սաաակէր»:

«Դուժկան հասանը... վասն ապստամբին
Վասակայ, յեսս կացեալ յուխաէն քրիստո-
նէութեան և աւերեալ զրազում տեղիս
Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս
արքունի, որ կայեանք զօրացն էին՝ զԳառ-
նին և զՆրամօնս և զԴրասանակերան՝
զմեծ Դաստակերան, զՎարդանաշատն և
զամուրն Օշական... (հետեւում են մյուս
բերդերի անունները, որ զրավել էր Վա-
սակը) ...աւերեալ և հրձիգ արարեալ և զա-
մենեցուն ձեր զընաանիս փախուցեալ մեր-
մեալ յուրաքանչիւր բնակութենէ»:

Այսքանը բավական ենք համարում: Այս տիպի «նմանութիւններին»
մասին կյուլիսերյանն ասում է (191). «Ահա խումբ մը նմանութիւններ ալ,
որոնք նույնութիւններ են իրապես: Վարդանանց պատմագիրն իր առջևն
ունի աղբյուր մը. կհետևի անոր ընթացքին՝ և կարծես յուր հետքերը խո-
տորցնելու արվեստական միջոցներ ի գործ կդնու: Ինչ որ յուր աղբյուրին
մեջ որոշ է, զայն ընդհանուր բացատրութեամբ մը կփոխանակու: Հակասե-
հանվանե եղած հիշատակութիւնները, ըլլա նախարար կամ իշխան, ըլլա
եկեղեցական, պաշտոնի ախտոսներով կրացարե և փոխադարձարար: Արք
Փարպեցի բերդեան կըսե, ինքը քանի մը բերդերու անուն կըշարե» և այլն:

Մեղ թվում է, սակայն, որ այստեղ ևս կյուլիսերյանը բոլորովին սխալ-
ված է և նրա բերած օրինակներն ամենևին չեն ապացուցում նրա կան-
խակալ թեղիսը: Մենք չենք խոսում առաջին օրինակի մասին, որ բնավ
ոչինչ չի ապացուցում. բայց պետք է հարցնել 2-րդ օրինակի վերաբերմամբ՝
միթե Նորիցն երեցների մասին խոսելիս իր «աղբյուրին» մեջ գտնելով իր
ամենասիրելի հերոսներից մեկի՝ Ղևոնդ երեցի անունը, կջնջեր այն և «պաշ-
տոնի տիտղոսով» միայն կրացատրեր՝ «յուր հեաքերը խոտորցնելու համար»,
այն Նորիցն, որ նույն Արտաշատի ժողովի առթիվ մեկիկ-մեկիկ բերում
է բոլոր ներկա եղող եպիսկոպոսների անունները, առանց վախենալու, որ
«աղբյուրին» մեջ էլ այդ ցուցակը կա: Եվ, վերջապես, Արտաշատի անունը
որտեղից հանեց Նորիցն, եթե Ղազարն է նրա աղբյուրը: Չէ՞ որ Ղազարը
Արտաշատի անունը չի տալիս: Իւր է այստեղ «նույնութիւնը»:

Այնուհետև, 3-րդ օրինակի մեջ ոչ մի նույնութեան կամ նույնիսկ
նմանութեան մասին չի կարող խոսք լինել. դրանք անշուշտ բոլորովին
տարբեր դեպքեր են, կամ ամենաշատը, եթե խոսքը նույն դեպքի մասին
է, նրա մասին եղած պատմութեան բոլորովին այլ վարիանտներ են հասել
երկու պատմիչներին և նրանք իրարից անկախ օգտագործել են այդ վա-
րիանտները: Ղազար Փարպեցու ասելով՝ Ջանդազանը ուրիշներից լսում է

Հայոց նախարարների խորհուրդը և գնում-վաճառում է Վասակին: Այս իմաստով՝ հայ նախարարները բռնում են նրան Արծակ գյուղում, բանտարկում Բերդկոնքում և շատ օրեր անցնելուց հետո քարկոծելով սպանում որպես մատուցողական պատիժ: Իսկ Եղիշեն պատմում է, թե նախարարներից մեկը, որը հենց խորհրդի մեջ էր, չհամաձայնեց նրանց հետ և, որպեսզի զաղտնիքը վաղաժամ չբացվի, տեղնուտեղը քարկոծվեց միարանվածների կողմից որպես նախազգուշական միջոց: Ո՞րն է այստեղ «նույնությունը» կամ թեկուզ «նմանությունը»:

4-րդ օրինակը նույնպես ավելի շուտ ապացուցում է Եղիշեի ինքնուրույնությունը, քան թե կախումը: Այնտեղ կա ուշագրություն արժանի սազմագիտական մի զարմեղամբ, որ չունի Ղազար Փարպեցին, և որը դուրս է տալիս Եղիշեի՝ որպեսզի ավելի մոտիկ, ծանոթ և հմուտ լինելը: Այդ զարմեղամբն է՝ եղջ թևն բեկեալ, դձախոյ կողմամբն արկեալ և սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին և փախստական առնէին մինչև յամուր տեղին մայրեացն առ խորագոյն դարիւքն Լոփնաս գետոյ: Արա հանդեպ Ղազար Փարպեցին պատմում է Արշավիր Կամսարականի ճահիճների հանդիպելու, նրանց մեջ խրվելու և այնտեղից՝ մի մուշկը մորի մեջ թողած՝ սմբամոյկ տղամաթախա հանդերձ ամենայն զինուսն հաննալ զերկվարն ի ցամաքս՝ վիպական պատմությունը, որ անշուշտ հետագա ճոխացման բնույթ ունի:

Վերջապես, 5-րդ օրինակը, Ղազար Փարպեցին առում է միայն, թե վասակը զբաղվել է բերդերը, իսկ Եղիշեն մեկ-մեկ թվում է, թե որ բերդերն է զբաղվել: Ի՞նչպես կարող է սթանից հետևել, թե Եղիշեն Ղազարից հետո է զբղվել և ձեռքին ունեցել է Ղազարի դործը, ինչ համար բոլորովին անհասկանալի է: Ընդհակառակը, որ Եղիշեն մեկիկ-մեկիկ թվում է զբաղված բերդերը, այդ ցույց է տալիս, որ նա ժամանակով ավելի մոտ է նկարագրվող անցքերին և այդ բերդերից յուրաքանչյուրի անունը նրան որևէ բան է ասում, մինչդեռ 40—50 տարի հետո զբող Ղազար Փարպեցուն լիովին բավական էր ասել միայն, որ Վասակը զբաղվել է բերդերը առանց մանրամասնությունների մեջ մտնելու: Մենք, որ ապրել ենք առաջին իմպերիալիստական պատերազմը և այժմ ապրում ենք երկրորդը, տեսել ենք և լավ գիտենք, որ պատերազմի ժամանակ և նրանից թիչ ժամանակ անցած՝ նրա բոլոր մանրամասնությունները, զբաղված թեկուզ և փոքր քաղաքների ու բերդերի անունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում և բերնբերան են անցնում, իսկ երկար ժամանակ անցնելուց հետո՝ այդ մանրամասնություններն ու անուններն աղոտանում ու մոռացվում են և միայն ընդհանուր պատկերն է մնում: Եվ ժամանակակից պատմագիրներն էլ, իհարկե, զեպքերի մասին շատ ավելի մանրամասնություններ են հիշում ու անուններն են մեջ բերում, քան հետագա պատմագիրները, որոնք պատմական անցքերը գիտում են թույնասլաց բարձունքից և տեսնում ու նկարագրում են միայն ընդհանուր բնորոշ գծերը:

Այսպիսով, քննարկելով Կյուլեսերյանի հիմնական վաստարկումները, մենք զալիս ենք այն հզորակացուի, որ, չնայելով իր բոլոր ձեղերին, նրան չի հաջողվել ապացուցել իր թեկուզ Եղիշեի ականատես պատմագիր չլինելու և Ղազար Փարպեցուց օգտված լինելու մասին: Իսկ եթե սրա վրա ավելացնենք նաև բանասերների ուշադրությունից մինչև այժմ վրիպած

Ղևոնդ երեցի հիվանդոտ լինելու վերաբերյալ հասկանալի չէ Պապի Փարպեցու և Նեղիզի մեջ, որտեղից երևում է, որ այստեղ Նեղիզին ոչ մի զեպում չի կարող Փարպեցուց օգտված լինել, այլ առնվազն պետք է ընդունել մի երրորդ աղբյուրի գոյությունը, ապա շատ հավանական կդառնա, որ այդ աղբյուրը մեր այժմյան Նեղիզի սկզբնագիրն է կամ նախատիպը, որը հետագայում խմբագրվելով ու փոփոխվելով՝ ընդունել է իր այժմյան կերպարանը:

Գ. Անցնում ենք Նիկ. Աղունցյի մի գիտողությանը, որը նույնպես պատճառ է դարձել Նեղիզին VI դարի մատենագիր հոշակելու Աղունցը իր «Армения в эпоху Юстиниана» (СПБ, 1908) հմտալից ուսումնասիրության մեջ, խոսելով Հունաց բաժնի Հայաստանում գտնված Վասակ Մամիկոնյանի գործակցության մասին մարզպան Վասակ Սյունու հետ, այն կարծիքն է հայտնում, թե դուրս Նեղիզի հիշած Վասակ Մամիկոնյանն այն Վասակն է, որը 536 թվի ապստամբության ամենագործունեյա անդամներից մեկն էր և կանգնած էր նաև հայ իշխանների Պարսից թագավոր Խոսրով I-ին ուղարկած պատգամավորության գլուխ: Այսպիսի կարծիք հայտնելու համար նրան հիմք են ծառայում Վասակ Մամիկոնյանի մասին Նեղիզի ասած հետևյալ խոսքերը. «Այդն ալ սպարապետ էր Ստորին Հայոց և հաւատարիմ զորացն Հռոմոց ի սահմանին Պարսից» (XV յեղանակ): Արովհետև, ինչպես ասում է Աղունցը, «հայտնի է, որ ոչ սատրապութիւններում և ոչ էլ ներքին Հայաստանում կայսրները զորք չէին պահում և սահմանների, ինչպես նաև երկրի պաշտպանությունը հանձնարարված էր տեղական ուժերին, կիսով մինչև 529 թվականը, երբ Հռոմեացիներն ստրապետ և նրան նշանակա երեք զուկեր: Դանի որ պատմադիրը խոսում է Հայաստանում եղած հռոմեական զորքերի սպարապետի մասին, հավանանք այս ստրապետի թե զուկերից մեկի իմաստով, նրա երկը չի կարող 529 թվից առաջ գրված լինել» (XII 125 և 126 և ծանոթագրություն):

Գլխավորապես Աղունցի այս կարծիքի հիման վրա Արք. Զամինյան (Հայ գրականության պատմություն, Ա. մաս, Նոր-Նախիջևան 1914, էջ 99) Նեղիզին համարում է VI դարի առաջին կեսի հեղինակ, որը ոչ միայն Վարդանին ժամանակակից չէ, այլև մեծ զեպերից 20—30 տարի հետո է ծնվել: Սակայն Զամինյանը տարրինակ կերպով միևնույն ժամանակ այն կարծիքն է հայտնում, թե այս նշանագրությանը չեն հակասում Նեղիզի զեպերին ակնհասեա եղած լինելու մատանշումները: Նրա ասելով՝ «Այդ խոսքերն արձագանք են պարսկական այն հայածանքներուն, որոնք երբեք զաղարում չունեին և միայն կըարունակվեին Վարդանանց ատեններին մինչև մեր հեղինակի ապրած ժամանակները VI դարուն առաջին քառորդը, զեթ մասնավոր զավաններու մեջ: Ի նկատի առնելով Նեղիզի ոգին՝ կարող չենք վերահիշյալ բարերու մեջ կեղծիք տեսնել. հեղինակը պարզաբար կուզե ասել, թե ինքը ընդհանրապես ծանոթ է պարսկական հայածանքներուն և անձամբ իսկ փորձած: Այսպիսի բունագրութիկ բացատրություն, իհարկե, բոլորովին անընդունելի է. ինչպես կարող է զեպերից 20—30 տարի հետո ծնված

1 Այդ մասին տե՛ս Ե. Մ. Ինսյան, Նեղիզի եղբայրների պատմությունը և նրա նորագույն քննադատը, Տեղեկագիր ՍՍՏՄ Գիտությունների Ազգային գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի, Երևան 1943, № 2, էջ 64—65 ծանոթ.

մարզը զբեկ, թե ինքն ականատես է հղել իր ծննդից առաջ կատարված զեպեներին և այդ կեղծիք չպիտի համարվի, բոլորովին անհասկանալի է՝ Սակայն վերադառնանք Ն. Աղոնցի գիտողությունը:

Նախ, 529 թվին ստրատեգություն հաստատելը բոլորովին չի ժխտում, որ մինչև այդ թվականներն էլ բյուզանդացիները պահպանում էին իրենց պետություն և իրենց ենթարկված Հայաստանի սահմանները Պարսից պետության դեմ: այդ զորքերը կազմվում էին տեղական ուժերից և չէին մտնում բյուզանդական զինվորական կազմակերպության մեջ նեղ մտքով առած. նրանք հատուկ սահմանապահ զորքեր էին¹: Իայց նույնիսկ տեղական ուժերից կազմված հատուկ սահմանապահ զորքերն էլ պետք է որ իրենց զորապետն ունենային: Իսկ Բնչ անուն կարող էր տալ Պարսկական Հայաստանում ապրող և զբոց հայր այդ զորապետին, եթե ոչ ընդհանուր զորածածկված մեջ գտնվող և քաղաքացիություն ստացած «սպարապետ» անունը: Չէ՞ որ Եղիշեն առաջին յեղանակի մեջ նույն պարսկական սպարապետ անունով է կոչում նաև հույն զորավար Անատոլիոսին: Այնուհետև, ինձ թվում է, որ Աղոնցը սխալ է բացատրում Եղիշենի համապատասխան հատվածը, ասելով թե՛ «Պատմագիրը [Եղիշեն] խոսում է Հայաստանում եղած հռոմեական զորքերի սպարապետի մասին»: Եթե պատմագիրը Վասակ Մամիկոնյանին համարել Հայաստանում եղած հռոմեական զորքերի սպարապետ, այն ժամանակ նա Վեյրն այն սպարապետ էր Ստորին Հայոց՝ բառերի վրա չէր ավելացնի «և հաւատարիմ զորացն Հռոմիոց ի սահմանին Պարսից», որովհետև նախ՝ հռոմեական զորքերի սպարապետի համար անմարտություն էր ասել, թե նա հավատարիմ կամ վստահություն ներշնչող անձ էր հռոմեական զորքերի համար Պարսից սահմանազլխին և երկրորդ՝ չէ՞ որ հռոմեական զորքեր չկային Պարսից սահմանի վրա, էլ Բնչպես կարող էր Վասակ Մամիկոնյանը նրանց սպարապետը լինել: Վերոհիշյալ հատվածը մեծ է, ուրևիմ, միայն այն մտքով հասկանալ, որ Վասակ Մամիկոնյանը եղել է Ստորին Հայոց տեղական ուժերից կազմված սահմանապահ զորքերի սպարապետը, որը և իբրև այդպիսին կարող էր հռոմեական զորքերի կողմից որպես հավատարիմ ու վստահելի անձ ճանաչվել: Այսպիսով, Վասակի սպարապետ կոչվելը և Եղիշենի համապատասխան հատվածը ոչ մի կապ չունի 529 թվին ստրատեգություն հաստատելու կամ զուկերի պաշտոնի հետ և ոչ մի զեպեում չի կարող հիմք ծառայել Եղիշենին իր բնական տեղից VI դար տեղափոխելու համար:

Ապա, անկախ այս հանգամանքից, պետք է ուշադրություն արձևել նաև այն, որ Վասակ Մամիկոնյանին վերաբերող հատվածը Եղիշենի մեջ յատ խառն ու անկարգ դասավորություն ունի. օրինակ՝ հենց միայն սուտ քահանաներին վերաբերող հատվածը կրկնվում է երկու անգամ և երկրորդ

¹ Հմմտ. Dr. K. Güterbock, Römisch-Armenien und die römischen Satrapen im vierten bis sechsten Jahrhundert. Königsberg 1. Pr. 1900. էջ 36. «Römische Truppen waren auch in den Satrapengebieten nicht stationiert... Die Kaiser erachteten es für ausreichend, den Grenzschutzdienst gegen Persien von den Satrapen selbst und ihren Leuten versehen zu lassen. Selbst das unmittelbar an der persischen Grenze gelegene Martyropolis hatte noch unter Kaiser Anastasius keine römische Besatzung. Vorübergehende Einfälle der Barbaren mußten die Satrapen abwehren, im Falle eines Krieges aber Hilfstruppen stellen und mit ihnen zum römischen Heere stossen». Նույնպիսի փոխաբացերություններ էին իշխում անշուշտ նաև Եղիշենի հիշած Ստորին Հայոցում:

անգամ ընկել է Հունաստան ուղարկված թղթերի և նրանց թողած ազդեցության ամփոփումը տվող բառերի միջև: Ուստի և պետք է ենթադրել, որ այն կարող է նաև հետազայի ընդմիջարկություն լինել: Բացի այդ, Եղիշեն III յեղանակում պատմում է, որ հայերը բյուզանդացիներից օգնություն են խնդրում պարսիկների դեմ կռվելու համար և հատուկ հրովարտակ են ուղարկում Քևոզու կայսրին Հովսեփ կաթողիկոսի, Վասակ մարզպանի, Ներշապուհ Ռմրոսյանի և Վարդան սպարապետի ստորագրությամբ: Մի մարդ, որ պաշտոնական ձևով ապավինել էր այդ օգնությանը և խնդրել, թե «Թուք ևս ի ձեռն առջիք զմեզ... եթե սակաւիկ մի հեղաշար, զուցէ բազում և այլ աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա», էլ ինչպես կարող էր դրանից մի քանի ամիս շանցս՝ ուստասխան շտապած՝ կայսեր թագաւորանիստ քաղաքը նորից թղթեր ու հրովարտակներ գրել և մուրեցնել հույներին, թե բոլոր հայերը միարանել են իրեն հետ և պարսիկների դեմ ոչինչ չունեն: Ինչու պետք է հույները հավատային այդպիսի մարդուն: Անգ թվում է այդ պատճառով, որ Եղիշեի նախնական ընդդիման աշտեղ սղափազվել է, մոտիմություն է ենթարկվել հետագա խմբագրողի կողմից և դուցե VI դարում ապրող Վասակ Մամիկոնյանին վերաբերող գործողությունները վերագրվել են V դարին, ինչպես այլ առթիվ ևս շեշտել ենք:

Հարկ ենք համարում այստեղ ավելացնել նաև այն, որ Ն. Աղոնցը, հայտնելով այն կարծիքը, թե «Եղիշեն մեր ձեռքը գտնված խմբագրությունում չի կարող VI դարից առաջ գրված լինել», միաժամանակ ընդունում է, որ Եղիշեի Պատմության մեջ շատ ինքնուրույն էջեր էլ կան, որոնք չեն կարող աղբյուր ունեցած լինել Վաղար Փարպեցուն: Ուստի Աղոնցը ենթադրում է, թե Եղիշեն այդ կետերը քաղել է մի երրորդ աղբյուրից:

Անդեանուր եզրակացություն:—1) Եղիշեի քննադատներից ոչ մեկին չի հաջողվել ապացուցել, որ Եղիշեն ժամանակակից պատմիչ չէ և կախումն ունի Վաղար Փարպեցուց՝ գրված լինելով նրանից հետո VI դարում: 2) Եղիշեի «Վարդանանց պատմությունը» գրված է V դարի 60-ական թվականներին, բայց նրա սկզբնաղբյուրը կամ նախատիպը հետադառնում ենթարկվել է խմբագրման, որոշ փոփոխությունների: 3) Այդ խմբագրական փոփոխությունները թիվը շատ մեծ չէ և Եղիշեի Պատմության հետագա ուսումնասիրությունը պետք է իր առջև նպատակ դնի պարզելու այդ փոփոխությունների և հնարավոր ընդմիջարկությունների հարցը:

¹ Адоиц, «Марзбан Васак перед судом историков». Записки Вост. Отд. Импер. археолог. Общ. XV, СПб 1904, էջ 0122—0130